

Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՄԻ ԷԶ ՀԱՅ-ՎՐԱՑԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Մատենագարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի № 7174 ձեռադիրը հայ-վրացերեն մի բառարան է, որը բովանդակում է շուրջ 8190 բառ և գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում:

Տալիս ենք նրա համառոտ նկարագիրը.

Թիրքեր — 213, օրինակողի կողմից էջակալում կատարված չի եղել, կարմիր թանաքով կատարված առաջին էջակալումը պատկանում է, ամենայն հավանականությամբ, ձեռագրի վերանորոգող-լրացնողին: Պրակներ — եղել են լի (32), յուրաքանչյուրը 8 թերթից: Ի՞Զ պրակի 7-րդ թերթից մինչև լ. պրակի 5-րդ թերթը (ընդամենը 60 թերթ) կտրված հանված է: Մեծություն — 11,3×8,5×4: Նյուր — գեղնագույն թուղթ, միջակ հաստության և անողորկ (վերակազմած էջերը՝ սպիտակավուն և ավելի ողորկ): Կազմ — կաշեպատ թուղթ, պահպանակը կազմի ներքնակողմի շարունակությունն է՝ գորշավուն-սպիտակախայտ: Պահպանակի ներսի կողմում կան անընթեռնելի գրություններ, ոռուերեն, հավանաբար 19-րդ դարի վերջերին զրված: Վիճակ — բավարար: Թերթերը խոնավությունից խունացած են և վերանորոգված 19-րդ դարի եսերին: Գրություն — երկսյուն, հայերեն և վրացերեն, ոև թանաքով (մի քանի էջերում վրացերենը՝ քիմիականով): Տողեր — 15: Դատարկ թերթեր — վերջին երկու թերթը: Գիր — նոտրագիր, երրենն շեղագրին հարող տառաձեկուվ, վրացերենը՝ «մխեդրուլի»: Գրիչը, գրության վայրը<sup>1</sup>, նեղինակը — անհայտ: Հեղինակի կողմից չբարգմանված բառեր — 79, որից 8-ը զրկած չնշված է: Ուշ շրջանում բարգմանված բառեր — 46: Հավելումներ — 4 բառ: Հիշատակագրություն — էջ 213ը: «... Հոգիագարդ և հոգէոր հայրու իմուտավածաբան և քաջ քարոզ Ստեփան վարդապետին»:

Հիշատակագրությունը կատարված է ընդօրինակողի կողմից, որը, հավանաբար, ինքը հեղինակն է: Թերեւ Ստեփան վարդապետի ով լինելը պարզելու դեպքում հնարավոր լինի կուհումներ անել նաև դրչության վայրի և հեղինակի մասին:

Բանասերները բաղմիցու քննության են ենթարկել հայ և վրաց ձողովուրդների մատենագրական ընդհանրությունների ու մտավոր փոխազդեցությունների հարցը, սակայն բառարանագրությունն իբրև այդ կապերի նոր

<sup>1</sup> Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ առաջմ հայտնի հայ-վրացերեն գրչագիր բառարաններից երկուսը, որոնք սույն հազորդումով ներկայացվող բառարանի հետ զբեթե նույն բառամթերքն ունեն, զրված են Ախալցիխեռում, հնարավոր է ենթարկել, որ այս ձեռագիրը ես զրված է այնուեղ:

վկալություն՝ չի ուսումնասիրվել։ Դա մասամբ բացատրվում է մեզ հասած հայ-վրացերեն բառարանների սահմանափակությամբ, մասամբ էլ՝ դրանց ուշ ըրշանի գրչություն լինելով։

Եվ հայերին և վրացիներին շատ վաղուց են հետաքրքրել այլ ժողովուրդների լեզուները, որոնց հետ պատմականորեն առնչվել են նրանք։ Պակաս չի եղել և այլազգի մտավորականների հետաքրքրությունը դեպի հայերենն ու վրացերենը<sup>1</sup>։ Բնականաբար դեռ մինչև 18-րդ դարը (որի կեսերին է գրվել մեղ հետաքրքրող բառարանը), հայերն ու վրացիներն ունեցել են բառարանագրության որոշակի փորձ ու սկզբունքներ։

Հայերեն և վրացերեն լեզուներով բառարան կազմելու նախապատվությունը պատկանում է վրաց հայտնի բառարանագետ-գրող Սուլիման-Մարա Օրբելիանիին (1658—1725)։ Նրա „Տօջացու զոնա“ (Բառդիրք)-ը հիմնականում վրացերեն բացատրական բառարան է, սակայն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այդ բառզրքի վրացերեն-հայերեն բաժինը՝ 1874 բառերի թարգմանությամբ<sup>2</sup>։ Ս. Ա. Օրբելիանին հայերեն բառերը դրել է վրացական տառադարձությամբ, որը երբեմն դժվարացնում է իմաստի ճիշտ փոխանցումը, իսկ երբեմն էլ՝ բոլորովին այլ նշանակություն տալիս (օրինակ՝ յշոր—թարգմ.—այր, պետք է լինի՝ յշորօցո—այրի)։ Բանավոր ճանապարհով ծանոթ լինելով հայերենին (ոմանց կարծիքով՝ ընթերակալի միջոցով), նա գրականի փոխարեն երբեմն օգտագործում է բարբառալին ձեւեր (օր. յշորյօծա—թըոշանօցլ—մտիկանիիլ) և այլն։

Վրաց-հայերեն ուրիշ բառարան մինչև այժմ հայտնի չէ, իսկ հայ-վրացերեն հայտնի բառարանների բաղդատումն ու դիտական գնահատումը դեռ չի կատարված։

Բնդիսանուրը այս բառարանների մեջ Մ. Սերաստացու «Քերականություն գրաբարի լեզուի հայկացան սեռի» (Վենետիկ, 1730 թ.) երկասիրությանը կից բառդիրքն իրի սկզբնաղբյուր օգտագործելու է։ Այն կազմելիս Մ. Սերաս-

<sup>1</sup> Մինչև օրս հայտնի են հայ-վրացերեն չորս բառարաններ, երեքը պահպատմ են Թրիլիսիի Պետական կենտրոնական արխիվում (նրանց նկարագրությունը տես պրոֆ. Լ. Մելիքօնթ-բեկի «Յուցակ հայերեն ձեռագրաց վրաստանի Պետ. կենտրոնական արխիվի» հոդվածում, «Բանաբեր Մատենադարանի», № 4) և մեկը երեանի Մատենադարանում։ Պրոֆ. Ի. Արուլաձեն իր կազմած «Ժալո Սոմելոն» (հին հայերեն) ծաղկաբաղի համար օգտագործած գրականությունը թվարկելիս, նշում է նաև հայ-վրացերեն ձեռագիր բառարաններ։ Որպես ծանոթություն նա գրում է. «Դրանց թիվը առ այսօր վեցն է. նրանք կազմված են, ինչպես մենք նշել ենք 1932 թ., Մխիթար Սեբատացու քերականության ցանկի հիման վրա։ Վերջինս էլ բաղկացած է քերականությունում օրինակ բերդիքած բառերից։ Նրանց հրատարակումը մտադիր ենք կատարել պրոֆ. Մելիքօնթ-բեկի հետ համատեղ։ Բառարանների թիվը վեց հաշվելիս պրոֆ. Արուլաձեն, ինչպես մեղ հայտնեց վերջերս, ի նկատի է ունեցել մի ժամանակ Թրիլիսիի Ստ. Շահումյանի անգան քաղաքային գրադարանում գանգող գրչադիր հայտառ բառարանը, որի վրացաւառ արտագրությունը կատարել է ինքը՝ Ի. Արուլաձեն և Քութայիսում զանգող մի այլ բառարան։

<sup>2</sup> 16-րդ դարում եվրոպացի գիտնականներն արգենի լուր բոլորի հայտարարել էին հայերենի և վրացերենի ուսումնասիրության կարենությունը։ Առաջիններից էին Վիլհելմ Պոստելը (1510—1590) և Ամբրոսիոս Թեզեն, իսկ 1629 թ. համում հրատարակեց Ստեփան Պողոսիի վրաց-իտալերեն բառարանը։

<sup>3</sup> Այդ բաժնի ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. Գ. Սեմկը, ցագոր, նրա ուսումնասիրությունը դեռ հրապարակված չէ։

տացին նպատակ է ունեցել ի մի բերել սոսկ այն բառերը, որոնք դործածվել են քերականության գրքում որպես օրինակ. այս առթիվ նա գրել է.

«Գումարք անուանց և բայից, և ալլոց բառից, որք շարահիւսին կարդաւ ալրութենի կերպիւ ցանդի ի գիւրաթիւն գտման այնց ամենից, որք հոգվեցան և լծորդեցան, և առ պահանջեցեալ խնդիրո իւրեանց բացորոշեցան լալոմիկ Քերականութեան»<sup>1</sup>:

Հայ-վրացերեն բառարանների հեղինակները բառամթերքի հավելումներ Մ. Սեբաստացու բառզրքի վրա գրեթե չեն կատարել, բացառությամբ Վրաստանի Պետական կենտրոնական արխիվի Ն 622 գրչագրի, որը դրված է 19-րդ դ. վերջին՝ իրեն առձեռն բառարան հրատարակման ակնկալությամբ:

Քննարկիող բառարանն ուշագրավ է թարգմանության իր սկզբունքներով: Հայերենի քերականական-իմացարանական շատ կատեգորիաներ վրացերենում դրսենորման ուրիշ ձևեր են ընդունում: Հատկապես բայերի թարգմանությունը պահանջում է իմաստալին երանգների ու նրա հետ կապված արտահայտչական առանձնահատկությունների լորջ տարբերակում: Հայերեն որոշ բառեր ու արտահայտություններ թարգմանվում են մոտավոր նշանակությամբ, երբեմն հարկ է լինում մի բառիմաստը թարգմանել մի ողջ արտահայտությումը: Նախածանցավոր և ածանցավոր բառերը փոխանցվում են իմաստալին համապատասխան բառակապակցությամբ: Երբեմն նույն արմատի նոր բառարարդումները, որոնք թարգմանուղ լեզվում կարող են բացակայել, կամ նույն բառաձեի մեջ ամփոփել երկիրմաստություն, բառարանագիրներին հարկադրել են օգտիկի վրացերեն լեզվի ձևունությունից, խոսակցական, կենդանի լեզվից, կամ հին վրացերենի այն բառերից, որոնք արդ շրջանում արդեն քիչ գործածական են եղել:

### Բարդ բառերի թարգմանությունը

Հայոց լեզուն հարուստ է բարդ բառերով, որոնք ամբողջական իմաստ արտահայտելով հանգերծ, բառիմաստի ներսում տարբեր բառերի բաղադրում են ներկայացնում, այլ կերպ ասած, հիմնական գաղափարը նրանցից որևէ մեկն է արտահայտում (այստեղից էլ իսկական և անխական բարդություններ):

Բնականաբար հայերենից վրացերեն թարգմանելիս որոշ բառդ բառեր արտահայտվել են պարզ կամ ածանցավոր բառերով, մի մասն էլ՝ նույնպես բարդություններով կամ բառակապակցությամբ.

**Օրինակ՝ գործ — և յժե**

**գործածություն — յմնշլեծօ**

**գործակալ — թոնայժե**

**գործարան — և յմօս օջջոլո**

**գործարար — և յմօս թոյժեցօ**

Յուսայթյ (գործակալ) բառը Ա. Ա. Օրբելիանիի բառարանում բացատրվում է և յմօս թոյժեցօ կապակցությամբ (գործարար), մինչդեռ անհայտ բառարանագիրը երկուսն էլ թարգմանել է գործականաբար, փոխանցելով նրանցից լուրաքանչյուրի ճիշտ նշանակությունը: Այդ իսկ պատճառով էլ «գործակալը»

1. Մ. Սեբաստացություն գրաբարի լեզուի հայկական սեռի, վենետիկ, 1730, էջ 517:

թարգմանել է Սայմոն Յովելը օգոստոսի 10-ի, ինչով բացատրված է Յովելի թարգմանության մոտ:

«Գործարան» բառի թարգմանությունից երեսում է, որ բառարանագիրը աշխատել է հարազատ մնալ վրաց դասական լեզվին: Վրացերենում բավական վաղուց ընդհանուր գործածություն է գտել յահանա (քարիսանա—գործարան) բառը, որը փոխառություն է պարսկերենից (կար—գործ, ձաշ—տուն, եշա հնչունափոխությամբ): Բառարանում վերջինիս փոխարեն գործածված է Սայմոն օգջողու (սաքմիս աղղիլի) — գործի տեղ, գործառեղի:

Այնին բնորոշ է հետեւյալ բառարարդումների թարգմանությունը:

Խորհուրդ — Ցհրածցա աճ Սաօգոյմլոց  
Խորհրդագգաց — Սաօգոյմլութա Շեմ՛ցոյոծո  
Խորհրդածու — Ցհրածցու ծոմլցեծո  
Խորհրդական — Ցհեսաօգոյմլոց  
Խորհրդակից — Շաճա Ցհեսաօգոյմլոց  
Խորհրդակորոյս — Սաօգոյմլու ճամցարցացո  
Խորհրդատու — Սաօգոյմլու ծոմլցեմո

Նկատենք, որ Ս. Ս. Օրբելիանիի բառարանում վերջին վեց բառերը բացակայում են: Եթե հայերենում հիշյալ բառերը խմաստային ամբողջական նշանակություն են ստացել (երբեք խորհրդածու առելիս բառիմաստի բաղդատում չհնք կատարում), ապա վրացերենում հարկ է եղել նույն հասկացությունը արտահայտել երկու գոլականների հոլովված հարագրմամբ: Քանի որ «խորհուրդը» միաժամանակ նշանակել է և «գաղտնիք» և «խորհուրդ» (совет), ուստի բառարանագիրը այն թարգմանել է Ցհրածցու և Սաօգոյմլոց բառերով:

Նույնանչուն բառերը (մի խուլի կամ հնչեղի տարբերությամբ) վրացերենում երբեմն նույն հարաբերությամբ են թարգմանվում:

Օրինակ՝ գունտ — Ճշնդու աճյ Ծածուսա  
գունդ — Ճշնդու Ցօֆուսա

Իմաստալին պարզ տարբերակման համար տրված է բացատրական թարգմանությունը:

Նույնանիշ բառերի թարգմանությունը

Հայոց լեզուն հարուստ է նույնանիշ բառերով, հատկապես գրաբարում, որոնք երբեմն հիմնովին համբնկնում են իրար, երբեմն էլ՝ որոշ նրբերանգներ դրսեւում:

Հայերենից որեւէ այլ լեզվի թարգմանելիս հարկ է լինում ընտրել նույնանիշ բառերը ներկայացնող ճիշտ թարգմանություններ: Քննվող բառարանում, չնայած նրա առձեռն լինելուն, հանդիպում են ինչպես նույնանիշ, այնպես էլ նույնանուն բառեր: Համեմատենք մի քանի օրինակներ:

Չախչախել — Ծաճացոց  
Չաղխել — Ծաճացոց, Շեմոյսըրու

Հայերենում «Չախչախել», «Չաղխել» բառերը հիմնականում նույն նշանակությունն ունեն, փշրել, չարդել, չախչախել: Բայց «Չաղխել»-ը բացի վերոհիշյալից նշանակում է նաև այիշրել, կործանել, խոպառ չնշել: Բառարանա-

գիրը հաշվի է առել երանգալին այս տարբերությունը և «ջաղխելք» բացի ջանազգա-ից թարգմանել է նաև Շեմշևը, որը իրավացիորեն սպառում է հայերեն բառի նշանակությունը<sup>1</sup>:

Նույն բառի գործածումը իրուեւ ածական և գոյական բառարանագրին հարկադրել են օգտագործել վրացերենի բազմիմասությունը.

գովանի (գովասանքի արժան, գովելի) — Տայեծը<sup>2</sup>

գովելիք — Տայեծը

Առաջինը ածականաբար է օգտագործվում, երկրորդը՝ գոյականաբար: Վրացերենում Տայեծը-ն երկու իմաստն էլ արտահայտում է, միջին վրացերենում առավել գործածական է եղել հիշյալ ձեր, ուստի Օրբելիանիի մոտ նույնակես յշեած բառից բաղադրիված միայն Տայեծը ձեր կա: Եոր վրացերենում ավելի գործածական են Տայեծը, Տայեծարու, Տայեծոյն ձերը:

Նույն բառին վերաբերող մի այլ օրինակ.

գովասան (գովք ասող) — յշեած

գովեստ — յշեած

յշեած-ն նշանակում է՝ գովել, գովք, գովեստ, բայց նաև գովող:

### Սեռի տարբերությունը

Սեռի քերականական հասկացությունը հատուկ է եղել նաև գրաբարին: Ժամանակի ընթացքում գրաբարյան խոնարհման ձեւերին համընթաց փոխվել է նաև սեռի հասկացությունը՝ ստանալով ձեւաբանական արտահայտություն: Գրաբարում ձեւաբանական նույն միավորը հաճախ տարբեր սեռակին նշանակություն ուներ.

Օրինակ՝ ծնաւ — ծնվեց և ծնեց:

Գրաբարում բայի սեռը որոշելիս գլխավոր ցուցիչը ոչ թե բառիմաստի հետ կապված սեռի քերականական հասկացությունն է, այլ՝ որ խոնարհմանը պատկանելիությունը:

Ներգործական ու չեղոք են «ե» խոնարհման պատկանող բառերը, կրտսերական՝ «ի» խոնարհմանը<sup>3</sup>: Միջին հայերենում կրավորական սեռը ստանում է որոշակի վերջավորություն՝ ուիմ (ւիմ, վիմ)<sup>4</sup>: Պահպանվում են գրաբարյան սեռի արտահայտման մի քանի ձեւեր:

Բառարանագիրը ելնելով սեռի տարբերակման գրաբարի կանոններից (թեև դրանք զետ որոշակի տարրորշված չեն եղել) և Միիթար Սեբաստաց բառզրքի սիստեմից, բառարանում սահմանագատել է սեռի հասկացությունը և վրացերենի թարգմանելիս պահպանել իմաստալին տարբերությունը:

Օրինակ՝ պատճառել — Յօնցիոնձ

պատճառիլ — Յօնցիոնձա

գանգատել — Տարիլցա Ըալա՛՛

գանգատիլ — Իօնց[օ] Ըալ

<sup>1</sup> Ցըմշևը — ոչնչացնել, բնաջնջել, կոտորել, խորտակել, կործանել, տապալել:

<sup>2</sup> յ. Տայեծը-ն, Տայելի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 1953, էջ 24:

<sup>3</sup> Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 2-րդ մաս, Երևան, 1952, էջ 248:

Գրաբարում «ե» և «ի» խոնարհման պատկանելիությունից որոշակի տարրերվում են այս բառերի սեմիքը — պատճառիլ — ներգործական, պատճառիլ — կրավորական։ Սակայն վրացերենում համապատասխան քերականական ցուցիչը, միշտ չէ որ հանդես է գալիս, երբեմն սեռի փոխվելուն զուգընթաց փոխվում է նաև բառը։ Բառարանագիրը հնարավորության գեպքում չանացել է սեռը տարրերել բայական վերջավորությամբ (զրաբարի նմանությամբ), ուստի մօջեցնօ — դիտել է իրեն կրավորական սեռի, մօջեցնօն՝ ներգործական։ Վրացերենի համար սա կայուն օրենք չէ։ Այն կապված է ակտիվի և պասսիվի, դիմալին նշանակության համեմացության հետ։

Երկրորդ բառի սեռը գիտակցվում է բառի իմաստային նշանակությունից։ Իօջօղո — գանգատվել, դժգոհել, արտնջալ, իսկ գանգատել՝ հայցել, հայց, հարոցել (բաղկացած Տարհյեղո — հայց և Ըալաթո — հարոցել, փոխել դժել) բառերից։

Այսպիսով բառարանագիրը աշի-տշով հետամուռ է թարգմանության ժամանակ սեռի պահպանմանը։ Շատ բառաձեռի վրացական բառարաններում չենք հանդիպում, որովհետեւ հայերենի իմաստը փոխանցելիս հարկ է եղել հարազրական թարգմանություն կատարել։

*Օրինակ՝ զինել — Ցյօսարալցնօ  
զինիլ — Տաջուրացըլու օլցնօ (զինք վերցնել, զինավորվել,  
զինք առնել):*

### Հոգնակի ցուցիչ

Գրաբարում ճանաչվում էին մի շարք անհղականներ։ Նրանք բոլորն էլ «ք» հոգնակիի ցուցիչն ունեն։ Այդ բառերից մի քանիսը աշխարհաբարում կորցրին հոգնակիի նշանակությունը և նոր ցուցիչ ստացան։

*Օրինակ՝ աչք — աչքեր  
խելք — խելքեր  
զիրք — զրքեր*

Սակայն վրացերենի փոխանցելու համար անհրաժեշտ է եղել անհղականների մի մասը թարգմանել հոգնակի, մրուս՝ եղակի թվերով։ Ուստի մարք — մզարո, բժժանք — յաջոյ, պատրանք — Տաշոյնո, իսկ որոշ բառերի թարգմանության ժամանակ պահպանվել է «ք»-ի հոգնակիի նշանակությունը։

*աչք — Շշալնօ  
զիրք — Ցօննօ<sup>1</sup>*

Ա. Ա. Օրբելիանիի բառարանում (18-րդ դարի առաջին քառորդ) Շշալու բառը գործածված է տղալո (ցա>ցա) ձևով, առկա բառարանում գրությունը համապատասխանում է ժամանակակից վրացերենի հնչյունական օրենքներին։

<sup>1</sup> Թրիլիսիի Պետական կենտրոնական արխիվում պահպաղ ԱՀ 627, 639, 622 բառարաններում այս բառերը թարգմանված են եղակի նշանակությամբ (Շշալո, Ցօննօ), հետեւ վարար, «ք»-ն իրեն հոգնակիի ցուցիչ արդեն դադարել է գիտակցվելուց։ Աս մեզ հիմք է առիս եղբակացնելու, որ № 7174 ձևադիրը գրված պետք է լինի 18-րդ դարի կեսերին և ամենորդել է մյուս բառարաններին։

Հավանաբար գրչագրի հեղինակը երբեմն դիմել է ժողովրդական խոսակցական լիտ լեզվին:

Վրացերեն հոգնակին կազմված է „Յ” մասնիկով, որը հատուկ էր մինչև 19-րդ դարի կեսերը: Ժամանակակից վրացերենում հոգնակին կազմվում է հիմնականում „ՅՅ” մասնիկով:

Հայ-վրացերեն ձեռագիր բառարանի մասին համաստա այս հաղորդումով, հասկանալի է, որ նպատակ չենք ունեցել սպառել նրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը և ըստ ամենայնի գնահատումը<sup>1</sup>:

Հայ-վրացերեն և վրաց-հայերեն բառարանները արժանի են հատուկ ուսումնասիրության, որպես հազարամյակներ հարեւանությամբ ապրող ժողովրդների մշակութային կապերի ուշադրավ հուշարձաններ:

П. МУРАДЯН

## СТРАНИЦА ИЗ АРМЯНО-ГРУЗИНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

### Р е з ю м е

Рукопись № 7174 Матенадарана представляет армяно-грузинский словарь, содержащий около 8190 слов. Место составления и автор рукописи неизвестны. По некоторым предположениям, местом составления словаря мог быть город Ахалцихе. Палеографические и синтаксические данные свидетельствуют о том, что рукопись написана во второй половине XVIII века.

Сравнение словаря с тремя подобными рукописями Центрального Государственного архива Грузии показало, что они происходят из одного и того же источника—„Грамматики армянского языка Мхитара Себастаци”, изданной в Венеции в 1730 г.

Более ранние армяно-грузинские словари, кроме 1874 слов, находящихся в словаре Сулхана-Саба Орбелиани, пока не известны науке.

Сравнительное исследование армяно-грузинских рукописных словарей дает возможность установить новые факты армяно-грузинских культурных связей.

<sup>1</sup> Վերջերու մեզ հայտնի գարձաւի Թրիլիսի Զենազրերի ինումիտում պահպառ Երեք լեզվականություն (վրացատառ) հինգ էջանոց մի պատառիկ (№ 1152 Ի)՝ տակամին աննկատ մնացած: Գրչագրը հայերենի, վրացերենի և աղքարեցաներենի (տատղուղօ) համադրական բերականություն է: Կազմված է հայոց լեզվի բերականական սիստեմի հիման վրա: առնչվելով ուռյն բառարանի սկզբնազրյուրի հետ: Նման ձեռնարկի և բառարանների առկայությունը Վրաստանում արդյունք է հայոց լեզվի նկատմամբ առաջացած հետաքրքրության, որի մասին պահպանվել են նաև սուլյդ վկայություններ (ան’ և Վրաստանու, արխիվ, ֆոնդ 229, թղթ. 14, № 37, բնչութեան 2եռ. ինստ. № 215. Ad. սուլյդ առնցքության 1914 թ., էջ 32—33 և այլն):

Դրչագրի բանասիրական բնուությունը մեր կողմից շարունակվում է:

